ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՊՄՀ ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի 2020թ. օգոստոսի 24-ի N 1 ամբիոնի նիստի

ՕՐԱԿԱՐԳ

1. 2020-2021 ուս.տարվա ամբիոնի աշխատանքային պլանի քննարկում և հաստատում
2. 2020-2021 ուստարվա Բեռնվածքներ
3. Հեռակա բաժնի քննությունների անցկացում
4. Ծրագրերի և թեմատիկ պլանների քննարկում
5. Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ՝ Ամբիոնի վարիչ Ն. Դալյանին, ով հայտնեց, որ:
ա/ կորոնավիրուսի պատճառով ՀՊՄՀ ղեկավարությունը որոշել է, որ առաջին կուրսի ուսանողների համար դասապրոցեսն սկսվելու է սեպտեմբերի 1-ից առերես ձևաչափով, իսկ մյուսների համար՝ սեպտեմբերի 15-ից առցանց ձևաչափով: Տեսական առարկաները դասավանդվելու են առցանց:
բ/ Ամբիոնի կազմում տեղի են ունեցել փոփոխություններ: Նախ, ֆակուլտետում իրականացված բարեփոխումների արդյունքում Օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի լուծարված ամբիոնի ռուսական բլոկի դասախոսները (Լ. Բալասանյանը, Բ. Այունցը, Է. Բայաթյանը) համալրեն են ռուսաց լեզվի ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը, իսկ ամբիոնը համապատասխանաբար վերանվանվել է որպես «ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն»: Բացի այդ, ամբիոնը լքել են Ի. Սարգսյանը, Դ. Ղարիբյանը, Ս. Ադամովան և Ա. Ագուլյանը: Այդ հանգամանքով պայմանավորված՝ օտար լեզուների ֆակուլտետն սպասարկող դասախոսների կազմին է միացել նաև Ն. Բելովան:
գ/ Առարկայական նկարագրերում փոփոխվել են կրեդիտները. թեմատիկ պլանները կազմվելու են 15 շաբաթվա կտրվածքով:
դ/ Անհրաժեշտ է ՕԼֆ ուսանողների ավարտական և մագիստրոսական աշխատանքների թեմաներ առաջարկել՝ նախապես հստակ մտածելով կատարվելիք աշխատանքի կառուցվածքը: Այդ աշխատանքների կատարման մոնիթորինգն անց է կացվելու ամիսը մեկ: նախապաշտպանությունը նույնպես կազմակերպվելու է առցանց ձևաչափով:
ե/ Դեռևս անցած ուսումնական տարվա ընթացքում կատարվել է ամբիոնում մշակված ռուսերենը որպես օտար լեզվի դասագրքի փորձարկումը: Ընթացիկ տարում անհրաժեշտ է շարունակել աշխատանքները երկրորդ կուրսի դասագրքի ստեղծման ուղղությամբ:
զ/ Սկսվել է հեռակա բաժնի չորրորդ կուրսի քննաշրջանը:
է/ Անհրաժեշտ է, որ դասախոսները շարունակեն զբաղվել գիտամեթոդական աշխատանքով և ընթացիկ տարում ունենան առնվազն մեկական հրատարակված հոդված:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Լ. Մարկոսյանը, մ.գ.թ., դոցենտ Ի. Մանուկյանը, մ.գ.թ., դոցենտ Լ. Կունդրատսը, մ.գ.թ., դոցենտ Լ. Մելիքյանը: Ելույթ ունեցողները անդրադարձան Ն. Դալյանի հնչեցրած հարցերին, ճշտեցին առցանց հարթակում աշխատանքին վերաբերող հարցեր, ինչպես նաև ավարտական և մագիստրոսական թեզերին վերաբերող մանրամասներ:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ բ.գ.թ., դոցենտ Ն. Բելովան, ով հայտնեց, որ առաջին կուրսի ռուսաց լեզվի վերոնշյալ դասագիրքը լրամշակվել է, դրան համապատասխան կազմվել է առարկայի ծրագիրը և թեմատիկ պլանը: Մշակված դասագրքում ներկայացված են խոսքային գործունեության բոլոր չորս տեսակները խթանող տեքստեր և վարժությունների համակարգ:

ՈՐՈՇԵՑԻՆ

1. Աշխատել առցանց և առերես՝ համաձայն բուհի որդեգրած մոտեցումների:
2. Անցկացնել հեռակա բաժնի քննություններն ըստ ժամանակացույցի:
3. Մինչև ս.թ. սեպտեմբերի 15 ամբիոն ներկայացնել ավարտական և մագիստրոսական թեզերի թեմաները:

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ Ն. Դալյան

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Գ. Զոհրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՊՄՀ ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի 2020թ. հոկտեմբերի 30-ի N 2 ամբիոնի նիստի

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Բեռնվածքներ 2020-2021
2. 2020-2021 Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի մոնիթորինգ
3. Աշխատանքը Classroom հարթակում
4. 2020-2021 Մանկավարժական պրակտիկայի կազմակերպում և անցկացում
5. Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ՝ Ամբիոնի վարիչ Ն. Դալյանին, ով հայտնեց, որ:

ա/ Ամբիոնում գոյացած թափուր ժամերը լրացնելու նպատակով ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը համալրվել է նոր մասնագետներով (Մ. Կեսայան, Ն. Այվազյան, Գ. Մարկոսյան): Այս հանգամանքով պայմանավորված՝ որոշ դասախոսների բեռնվածքներում կատարվել են փոփոխություններ: Բեռնվածքները կրկին կենթարկվեն փոփոխության հեռակա բաժնի առաջին կուրսի ընդունելությունից հետո:

բ/ Ամբիոնի վարիչի գլխավորությամբ և գիտական ղեկավարների մասնակցությամբ անց է կացվել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի մոնիթորինգ, որի արդյունքում պարզվել է, որ որոշ ուսանողներ աշխատում են, մյուսների մոտ նկատվել են թերացումներ (օր.՝ մագիստրատուրայի երկրորդ կուրսի ուսանող Խուդոյան Մարիամի մոտ): Առաջարկվել է փոխել Լ. Մարկոսյանի ղեկավարությամբ ավարտական աշխատանք գրող չորրորդ կուրսի ուսանող Զաքարյան Ալենայի աշխատանքի թեման: Ն. Դալյանը հորդորեց գիտական ղեկավարներին բարեխղճորեն աշխատել ուսանողների հետ, վերջինների հետ քննարկել առաջարկված թեմաները, տալ որոշակի պլան, ուղղություն: Նոյեմբերի վերջին անցկացվելու է հեռակա բաժնի չորրորդ կուրսի և հինգերորդ կուրսի ուսանողների կատարած աշխատանքների մոնիթորինգ:

գ/ Google Classroom հարթակում կատարվող աշխատանքները մշտակնա մոնիթորինգի են ենթարկվում թե ամբիոնի ղեկավարության, թե էլեկտրոնային կրթության բաժնի կողմից: Կատարված մոնիթորինգի արդյունքում բացահայտվել են որոշակի թերություններ: Դասերի տեսանյութերը պետք է տեղադրվեն համապատասխան խմբերի էջերում, բոլոր հայտարարությունները պետք է գրվեն ռուսերեն, տրվող առաջադրանքները պետք է լինեն պատճառաբանված, տնային աշխատանքները պետք է մեկնաբանվեն, տեսախցիկները պետք է լինեն միացված:

դ/ Ելնելով ստեղծված իրավիճակից՝ ՕԼՖ ուսանողների մանկավարժական պրակտիկան անց է կացվելու ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում հետևյալ ժամկետներում՝

- Նոյեմբերի 16-ից դեկտեմբերի 20-ը – 4 կուրսի ուսանողները կարող են միանալ առցանց դասերին:
- Նոյեմբերի 9-30 – մագիստրատուրայի I կուրսի ուսանողների համար լինելու է ակտիվ պրակտիկա՝ կրկին առցանց դասերին միանալու միջոցով:

ե/ Ամբիոնի կողմից պարբերաբար բոլոր դասախոսներին փոխանցվում են վերապատրաստման և գիտաժողովների վերաբերյալ տեղեկատվական նամակներ, խորհուրդ է տրվում, հնարավորության դեպքում, մասնակցել նման միջոցառումների:
զ/ Կորոնավիրուսով և պատերազմական իրավիճակով պայմանավորված՝ ՀՊՄՀ ղեկավարությունը որոշում է կայացրել առաջին կիսամյակում նախատեսված երկու միջանկյալ քննության փոխարեն անցկացնել մեկը՝ դեկտեմբերի վերջին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ամբիոնի դոցենտ, մ.գ.թ., Ն. Հայրապետյանը, բ.գ.թ., դոցենտ Լ. Մարկոսյանը: Ելույթ ունեցողները անդրադարձան ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի մոնիթորինգին, նշեցին վերջինի կարևորությունը և արդյունավետությունը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ մ.գ.թ., դոցենտ Լ. Մելիքյանը, դասախոս Թ. Հախումյանը, ովքեր հայտնեցին, որ պատերազմական իրավիճակով պայմանավորված, փոքր-ինչ նվազել է ուսանողների մասնակցության աստիճանը, կան ուսանողներ, որոնք զինվորագրվել/կամավորագրվել են, որոշ ուսանողների ընտանքներում կան վիրավորներ/զոհեր: Այնուամենայնիվ, ուսումնական գործընթացը շարունակվում է, դասախոսները փորձում են ուսանողներին վերադարձնել կրթական ոլորտ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Անցկացնել ավարտական աշխատանքների և մագիստրոսական աշխատանքների մոնիթորինգ նոյեմբերի 6-ին՝ անպայմանորեն հաշվետվությունների ներկայացմամբ, որոնք նախապես պետք է արժանանան գիտական ղեկավարների հավանությանը:
2. Classroom հարթակում աշխատել ըստ դասացուցակի, իսկ տեխնիկական խնդիրների դեպքում դասացուցակում տեղ գտած փոփոխությունների մասին պատշաճ կերպով տեղեկացնել ինչպես ուսանողներին, այնպես էլ ամբիոնի ղեկավարությանը:

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ Ն. Դալյան

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Գ. Զոհրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՊՄՀ ռուսաց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի 2020թ. նոյեմբերի 27-ի N 3 ամբիոնի նիստի

ՕՐԱԿԱՐԳ

1. Բեռնվածքներ
2. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի քննարկում
3. Աշխատանքը Classroom հարթակում
4. Մագիստրատուրայի 2-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի արդյունքների ամփոփում
5. Դասալսումներ
6. 2020թ. ամբիոնի կատարած աշխատանքների հաշվետվության քննարկում և հաստատում
7. Այլ

ԼՍԵՑԻՆ

Ամբիոնի վարիչ Ն. Դալյանին, ով հայտնեց, որ:

ա/ Ամբիոնի դասախոսների բեռնվածքները հաստատվել են: Ամբիոնում գոյացած թափուր ժամերը լրացնելու նպատակով ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը դեկտեմբերի 1-ից կհամալրի ևս մեկ մասնագետ՝ Գ. Բալյանը:

բ/ Ամբիոնի վարիչի կողմից անց է կացվել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի հերթական մոնիթորինգը: Սակայն որոշ գիտական ղեկավարներ չեն միացել մոնիթորինգի նպատակով կազմակերպված առցանց հանդիպմանը, ինչն անընդունելի է: Բացի այդ, բոլոր ուսանողները պետք է նախապես ուղարկած լինեին հաշվետվությունները, ինչը որոշ ուսանողներ չեն կատարել:

գ/ Google Classroom հարթակում կատարվող աշխատանքները մշտական մոնիթորինգի են ենթարկվում թե ամբիոնի ղեկավարության, թե էլեկտրոնային կրթության բաժնի կողմից: Կատարված մոնիթորինգի արդյունքում դեռևս բացահայտվել են որոշակի թերություններ, սակայն ավելի քիչ՝ ի համեմատ նախորդ ամսվա ընթացքում տեղ գտած թերությունների: Հիմնականում դիտողությունները վերաբերում էին՝

- Դասերի տեսանյութերի բացակայությանը լրահոսում,
- Առաջադրանքների ոչ պատշաճ /ոչ «Առաջադրանքներ» գործիքի միջոցով հրապարակված/ ձևակերպմանը,
- Տեսախցիկների անջատված լինելուն:

դ/ Մանկավարժական պրակտիկան մոտենում է ավարտին, պատկերն արդեն հստակ է: Մանկավարժական պրակտիկան կարելի է ընդհանուր առմամբ հաջողված համարել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ ամբիոնի դոցենտ, մ.գ.թ., Ի. Մանուկյանը, մ.գ.թ., դոցենտ Է. Բայաթյանը, բ.գ.թ., դոցենտ Լ. Մարկոսյանը: Ելույթ ունեցողները անդրադարձան ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի մոնիթորինգին և մանկավարժական պրակտիկայի արդյունքներին: Է. Բայաթյանը, խոսելով մանկավարժական պրակտիկայի մասին, նշեց, որ եղել են հաջողված դասեր և ոչ այնքան հաջողված, նույնիսկ որոշ ուսանողների չի վստահվել դասի անցկացում վերջինների թույլ հմտությունների պատճառով:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ մ.գ.թ., դոցենտ Ն. Հայրապետյանը մասնավորապես նշեց, որ իր ղեկավարությամբ ավարտական թեզ գրող մագիստրատուրայի երկրորդ կուրսի ուսանող Խուդոյան Մարիամի մոտ կա որոշակի առաջխաղացում: Այդուհանդերձ, կա պարբերաբար հանդիպումների անցկացման անհրաժեշտություն:

ՈՐՈՇԵՑԻՆ

1. Մանկավարժական պրակտիկան հիմնականում գնահատել որպես հաջողված՝ հաշվի առվելով առցանց ձևաչափը:
2. Շտկել Classroom հարթակում աշխատանքի ընթացքում տեղ գտած և մատնանշված թերությունները:
3. Հաստատել 2020թ. ամբիոնի կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը:

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ Ն. Դալյան

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Գ. Զոհրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՊՄՀ ռուսաց լեզվի ամբիոնի և նրա դասավանդման մեթոդիկայի
2020թ. դեկտեմբերի 28-ի N 4 ամբիոնի նիստի

ՕՐԱԿԱՐԳ

1. Մանկավարժական պրակտիկայի արդյունքների ամփոփում
2. Միջանկյալ քննությունների արդյունքներ
3. Աշխատանքը հեռակա ուսուցմամբ բաժնում
4. Այլ

ԼՍԵՑԻՆ

Ամբիոնի վարիչ Ն. Դալյանին ով, ամփոփելով մանկավարժական պրակտիկայի արդյունքները՝ նշեց, որ.

ա/ ընդհանուր առմամբ այն անցել է ըստ պլանավորածի, ուսանողները պաշտպանել են իրենց աշխատանքները:

բ/ Մնացորդային գիտելիքների ստուգման նպատակով ոչ մասնագիտական ֆակուլտետների 1-ին և 2-րդ կուրսերի բոլոր խմբերում անց են կացվել թեստեր: Միջանկյալ գրավորները անց են կացվել համաձայն հաստատված ժամանակացույցի և միացված տեսախցիկներով: Եղել են դեպքեր, երբ որոշ ուսանողներ չեն կցվել Classroom-ի դասընթացներին, ուստի չեն հանձնել միջանկյալ աշխատանքը և պետք է մնան լուծարքի: Պատերազմական իրավիճակով պայմանավորված՝ կուլտուրայի ֆակուլտետում եղել են բացակա ուսանողներ, որոնք զորակոչվել կամ կամավորագրվել են, ինչպես նաև վիրավորում են ստացել (օր.՝ Ա. Վահանյանի խմբում): Նման ուսանողներն, իհարկե, վերահանձնման հնարավորություն կունենան: Տեխնիկական միջոցների բացակայությամբ պայմանավորված՝ եղել են նաև բանավոր պատասխանած ուսանողներ (օր.՝ Ա. Մկրտչյանի խմբում): Ռուսերենը որպես օտար լեզու առարկայի համար կազմվել են միատեսակ թեստեր բոլոր խմբերի համար: Ընդհանուր առմամբ, առցանց քննաշրջանի արդյունքները կարելի է բավարար գնահատել: Օտար լեզուների բաժնում կան որոշ խնդիրներ՝ կապված առանձին ուսանողների հետ (օր.՝ Դարբինյան Սյուզաննայի հետ կապված), որոնց հարցը պետք է բարձրացնել ֆակուլտետի նիստին: ՕԼՖ քննաշրջանը նույնպես անց է կացվել համաձայն հաստատված ժամանակացույցի, տոմսերով, ընթերակաների ներկայությամբ և բաց տեսախցիկներով:

գ/ Հեռակա բաժնի դասերը մեկնարկելու են հունվարի 8-ից, բոլոր դասընթացները բացված են, և հարկ է ժամանակին տեղադրել բոլոր անհրաժեշտ նյութերը (առարկայական նկարագրերը, թեմատիկ տրոհումները, հարցաշարերը և այլն):

դ/ Ն. Դալյանը հորդորեց էլեկտրոնային տեղեկագրերը լրացնելիս լինել չափազանց ուշադիր՝ խուսափելու համար սխալներից և հետագա շտկման անհրաժեշտությունից:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ամբիոնի դոցենտ, մ.գ.թ. Է. Բայաթյանը, մ.գ.թ. Բ. Այունցը: Վերջինները խոսեցին մանկավարժական պրակտիկայի ընթացքում կատարված աշխատանքների մասին:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ Մ.գ.թ., դոցենտ Լ. Մելիքյանը, դասախոս Ռ. Հախումյանը, դոցենտ, մ.գ.թ. Ն. Հայրապետյանը: Ելույթ ունեցողները նշեցին, որ միասնական թեստերը և դրանց անցկացման ձևաչափն արդյունավետ են առցանց դասավանդման պայմաններում:

ԼՍԵՑԻՆ Ամբիոնի վարիչի հաղորդումն առ այն, որ ավարտական աշխատաքների և մագիստրոսական թեզերի և դիպլոմային աշխատանքների որոշ թեմաներ փոփոխվել են՝ Ն. Բելովայի՝ աշխատանքից ազատման հանգամանքով և նոր ղեկավարների նշանակմամբ պայմանավորված:

ՈՐՈՇԵՑԻՆ

1. Ընդհանուր առմամբ, դրական գնահատել առաջին կիսամյակի միջանկյալների արդյունքները:
2. Classroom հարթակում տեղադրել հեռակա բաժնում սովորողների համար անհրաժեշտ նյութերը և առցանց անցկացնել հեռակա բաժնում նախատեսված դասաժամերը:
3. Ժամանակին և ուշադիր լրացնել էլեկտրոնային տեղեկագրերը:

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ Ն. Դալյան

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Գ. Զոհրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՊՄՀ ռուսաց լեզվի ամբիոնի և նրա դասավանդման մեթոդիկայի
2021թ. հունվարի 29-ի N 5 ամբիոնի նիստի

ՕՐԱԿԱՐԳ

1. 2020-2021 Առկա բաժնում քննաշրջանի արդյունենրի ամփոփում
2. Ավարտական, դիպլոմային աշխատաքների, մագիստրոսական թեզերի քննարկման ժամանակացույց
3. 2020-2021 երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքները
4. Քարոզարշավի շրջանակներում ՀՀ միջնակարգ դպրոցների աշակերտների համար Բաց դռների օրվա կազմակերպում
5. Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ

Ամբիոնի վարիչ Ն. Դալյանին ով, ամփոփեց առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքները՝ նշելով, որ.

ա/ ՕԼ ֆակուլտետում բանավոր քննությունները անց են կացվել առցանց, ընթերակայի ներկայությամբ, կնքված տոմսերով և բաց տեսախցիկների առկայությամբ:

բ/ Փետրվարի 9-ին մեկնարկում է երկրորդ կիսամյակը, և, հավանաբար, բուհն անցնում է առերես դասավանդման: Այս հարցի շուրջ քննարկումները շարունակվում են, որոշ ֆակուլտետներ, օրինակ՝ Գեղարվեստական կրթության և Կուլտուրայի ֆակուլտետները, անցնում են ամբողջովին առերես ուսուցման, որոշ ֆակուլտետներ որոշում են կայացրել տեսական առարկաներն անցկացնել առցանց, իսկ գործնականները՝ առերես: Փետրվարի առաջին օրերին բոլոր հարցերը կհստակեցվեն, դասացուցակները կհաստատվեն, և մենք կիմանանք, թե ինչ ձևաչափով ենք աշխատելու:

գ/ Հեռակա բաժնի դասերն ավարտվում են ս.թ. փետրվարի 20-ին, ինչը նշանակում է, որ հնարավոր են համընկնումներ առկա խմբերի դասացուցակների հետ: Նման դեպքերում պետք է տեղափոխել դասերը՝ այդ մասին ժամանակին տեղեկացնելով ամբիոնի վարիչին և ուսանողներին:

դ/ Ավարտական, դիպլոմային աշխատանքների, մագիստրոսական թեզերի քննարկումը նախատեսված է անցկացնել փետրվարի վերջին: Ն. Բելովայի՝ աշխատանքից ազատման հանգամանքով պայմանավորված՝ փոփոխվել են որոշ թեմաներ, հարկ է պարզել, թե ինչ չափի աշխատանք են կատարել ուսանողները, ինչ խնդիրներ կան՝ ղեկավար-ուսանող հետադարձ կապի առնչությամբ, և այլ կազմակերպչական և բովանդակային հարցեր:

գ/ Առկա ուսուցմամբ երկրորդ կիսամյակի մեկնարկին ընդառաջ՝ անհրաժեշտ է Classroom հարթակում բացված և/կամ շարունակվող դասընթացներում տեղադրել առարկայական նկարագրերը, թեմատիկ տրոհումները, հարցաշարերը, դասախոսությունները և ձեռնարկները: Ն. Դալյանը նշեց նաև, որ Ռուսերենը որպես օտար լեզու առարկայի համար պատրաստ են ամբիոնի դոցենտ, մ.գ.թ. Ն. Հայրապետյանի կողմից կազմվող դասագրքի 5-ից 10-րդ դասերը, որոնք կուղարկվեն բոլոր դասախոսներին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ Ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Մ. Մարկոսյանը, դոցենտ, մ.գ.թ. Ի. Մանուկյանը, դոցենտ, մ.գ.թ. Ն. Հայրապետյանը, դոցենտ, բ.գ.թ. Ա. Վահանյանը: Վերջիններն ամփոփ ներկայացրեցին քննաշրջանի արդյունքները: Հիմնականում, քննաշրջանը նորմալ էր ընթացել, Լ. Մարկոսյանը շատ գոհ էր բանավոր քննության արդյունքներից:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ Մ.գ.թ., դոցենտ Ն. Հայրապետյանը, ով նշեց, որ ռուսաց լեզվի դասագրքի 5-րդ և 6-րդ դասերը շատ ծավալուն են, դրանք բավականին հագեցած են քերականական նյութով, կան բազմաթիվ երկխոսություններ, տեքստեր, վարժություններ, ուստի դրանք կբավականացնեն երկրորդ կիսամյակի աշխատանքներին:

ԼՍԵՑԻՆ Ամբիոնի վարիչի հաղորդումն առ այն, որ հավանաբար մարտ ամսին բուհի նախաձեռնած քարոզարշավի շրջանակներում ռուսաց լեցվի և նրա դասավանդման ամբիոնը՝ արտասահմանյան գրականության ամբիոնի հետ համատեղ, պետք է կազմակերպի Բաց դռների օր: Ն. Դալյանը հորդորեց ակտիվություն ցուցաբերել շրջանավարտների ներգրավելու ուղղությամբ:

ՈՐՈՇԵՑԻՆ

1. Ընդհանուր առմամբ, դրական գնահատել առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքները
2. Classroom հարթակում տեղադրել առկա բաժնի երկրորդ կիսամյակի համար անհրաժեշտ նյութերը:
3. Ակտիվ զբաղվել ՀՄՊՀ գովազդմամբ և նոր ուսանողների ներգրավման աշխատանքներով:

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ Ն. Դալյան

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Գ. Զոհրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՊՄՀ ռուսաց լեզվի ամբիոնի և նրա դասավանդման մեթոդիկայի
2021թ. մարտի 26-ի N 6 ամբիոնի նիստի

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Ավարտական, դիպլոմային աշխատանքների, մագիստրոսական թեզերի մոնիթորինգի արդյունքների ամփոփում
2. Միջանկյալ ստուգման նախապատրաստական աշխատանքները
3. Մանկավարժական պրակտիկայի արդյունքների ամփոփում
4. Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ՝

Ամբիոնի վարիչ Ն. Դալյանին ով, հայտնեց, որ՝

ա/ Ավարտական, դիպլոմային աշխատանքների և մագիստրոսական թեզերի մոնիթորինգին գիտական ղեկավարներից մասնակցել է միայն Է. Բայաթյանը, մյուսները չեն ներկայացել, ինչն անթույլատրելի է, քանի որ մոնիթորինգի ժամանակ ծագած հարցերը և խնդիրները վերաբերում են ոչ միայն ուսանողներին, այլև նրանց գիտական ղեկավարներին: Շատ դեպքերում, ղեկավարները կարող են մեկնաբանել, հիմնավորել նեղ բովանդակային հարցեր: Մոնիթորինգի արդյունքում պարզվել է, որ չորրորդ կուրսի ուսանողները հիմնականում պատրաստ չեն պաշտպանության, մագիստրատուրայում նույնպես կան խնդիրներ որոշ ուսանողների հետ (Ս. Դարբինյան, Մ. Խուդոյան, Թամարա):
Նախապաշտպանությունը անց է կացվելու ապրիլի 20-ին, 14:20:
Նախապաշտպանությանն ուսանողը պետք է ունենա աշխատանքի տիտղոսաթերթը, թեմայի թարգմանված վերնագիրը, ամփոփումը: Հեռակա բաժնի 5-րդ կուրսի նախապաշտպանությունն անց է կացվելու մանավարժական պրակտկայից հետո:

բ/ Միջանկյալ ստուգումները նախատեսված է անցկացնել մարտի 26-ից ապրիլի 12-ն ընկած ժամանակահատվածում, ուստի պետք է նախապատրաստվել: Ելնելով համավարակի վիճակից՝ շատ ֆակուլտետներ կրկին անցնում են առցանց դասավանդման ձևաչափին: Ուստի միջանկյալ ստուգումները պետք է անցկացնել օպտիմալ ձևով, լավ կլինի՝ բանավոր, դա խրախուսվում է:

գ/ 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկան, որը ղեկավարել են Բ. Այունցը և Է. Բայաթյանը, ավարտվել է, դրան հետևել է քննություն, որի ժամանակ ներկայացվել են դասի պլան-կոնսպեկտներ, դասերի վերլուծություններ: Արդյունքները գոհացուցիչ են: Ն. Դալյանը հավելեց

նաև, որ հաջորդ ուստարվա բեռնվածքում նախատեսվում է մանկավարժական պրակտիկայի ժամերը բաշխել բոլոր դասախոսների միջև:
դ/ Անկախ երկրում ստեղծված իրավիճակից՝ պետք է շարունակել զբաղվել գիտական աշխատանքով, պատրաստել թեմաներ առաջիկա մեթոդական սեմինարների համար, հնարավորության դեպքում տպագրել հոդվածներ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Լ. Մարկոսյանը, դոցենտ, մ.գ.թ. Ի. Մանուկյանը, դոցենտ, մ.գ.թ., Է. Բայաթյանը: Վերջիններն ամփոփ ներկայացրեցին ավարտական, դիպլոմային աշխատանքների և մագիստրոսական թեզերի հետ կապված խնդիրները և դրանք շտկելու ուղղությամբ տարվող աշխատանքը:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ՝ ամբիոնի դասախոս Ռ. Հախումյանը, ով ցանկություն հայտնեց ներգրավվել մանկավարժական պրակտիկայի աշխատանքներին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Նախապատրաստվել միջանկյալ ստուգմանը՝ անցկացնելու այն հիմնականում բանավոր:
2. Ավարտական, դիպլոմային աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապաշտպանությունը նշանակել ապրիլի 20-ին:

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ Ն. Դալյան

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Գ. Զոհրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՊՄՀ ռուսաց լեզվի ամբիոնի և նրա դասավանդման մեթոդիկայի
2021թ. ապրիլի 26-ի N 7 ամբիոնի նիստի

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Քննաշրջան
2. 2020-2021 ուստարվա ավարտական և մագիստրոսական աշխատանքների նախապաշտպանության արդյունքները / առցանց
3. ՕԼՖ-10 առկա մագիստրատուրա 1-ին կուրսի պրակտիկան և հաշվետվությունները կատարած աշխատանքի վերաբերյալ:
4. Աշխատանք Google Classroom էլեկտրոնային հարթակում

ԼՍԵՑԻՆ՝ Ամբիոնի վարիչ Ն. Դալյանին, ով հայտնեց, որ անց է կացվել ՕԼՖ մագիստրատուրայի 2-րդ կուրսի, բակալավրիատի առկա ուսուցման բաժնի 4-րդ կուրսի և հեռակա բաժնի 5-րդ կուրսի ավարտական և մագիստրոսական աշխատանքների նախապաշտպանություն, որի արդյունքներն արձանագրվել են: Ն. Դալյանը կարևորեց հետազոտական բնույթի աշխատանքներ իրականացնելու կարևորությունը, մանկավարժական պրակտիկայի դերն ու նշանակությունը ապագա մանկավարժների պատրաստման հարցում՝ շեշտելով, որ այդ հարցերին անհրաժեշտ է մեծագույն պատասխանատվությամբ մոտենալ և իրականացնել մագիստրատուրայի 1-ին կուրսից տարվող աշխատանքների մոնիթորինգ: Google Classroom հարթակում կատարվող աշխատանքները մշտական մոնիթորինգի են ենթարկվում թե ամբիոնի ղեկավարության, թե էլեկտրոնային կրթության բաժնի կողմից:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Մ. Մարկոսյանը, դոցենտ, մ.գ.թ. Ի. Մանուկյանը, դոցենտ, մ.գ.թ. Ն. Հայրապետյանը, դոցենտ, բ.գ.թ. Ա. Վահանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ընթացիկ բոլոր հարցերին տալ համակարգային լուծում:

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ	Ն. Դալյան
ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ	Գ. Զոհրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՊՄՀ ռուսաց լեզվի ամբիոնի և նրա դասավանդման մեթոդիկայի
2021թ. մայիսի 29-ի N 8 ամբիոնի նիստի

ՕՐԱԿԱՐԳ՝

1.Ավարտական և մագիստրոսական աշխատանքների պաշտպանության արդյունքները:

2. Նախապատրաստությունը քննաշրջանին:

3. Դասախոսների 2020-21 ուս.տարվա հաշվետվություններ:

4. Classroom հարթակում երկրորդ կիսամյակի նյութերի/առաջադրանքների տեղադրումը հեռակա բաժնի ուսանողների համար:

ԼՍԵՑԻՆ՝ Ն. Դալյանը նշեց, որ մագիստրոսները ակտիվ մասնակցել են պրակտիկային:

Ն. Դալյանը շեշտեց, որ գալիք քննաշրջանին պետք է նախապատրաստվել հավուր պատշաճի, մասնավորապես քննական տոմսերը պետք է կազմված լինեն ըստ ընդունված կարգի, ուսանողների թվին համապատասխան:

Ամբիոնի դասախոսները պիտի ներկայացնեն 2020-21 ուս.տարվա հաշվետվությունները: Classroom հարթակում բացված և/կամ շարունակվող դասընթացներում տեղադրել առարկայական նկարագրերը, թեմատիկ տրոհումները, հարցաշարերը, դասախոսությունները և ձեռնարկները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ բ.գ.դ., պրոֆեսոր Ն. Դալյանը, դոցենտներ Ն. Հայրապետյանը, Է. Բայաթյանը, Ա. Վահանյանը, ասիստենտ Ա. Բաղրամյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Ընդհանուր առմամբ, դրական գնահատել առաջին կիսամյակի միջանկյալների արդյունքները:
2. Classroom հարթակում տեղադրել հեռակա բաժնում սովորողների համար անհրաժեշտ նյութերը և առցանց անցկացնել հեռակա բաժնում նախատեսված դասաժամերը:

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝ Ն. Դալյան

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. Զոհրաբյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՊՄՀ ռուսաց լեզվի ամբիոնի և նրա դասավանդման մեթոդիկայի
2021թ. հունիսի 2-ի N 9 ամբիոնի նիստի

ՕՐԱԿԱՐԳ՝

1. 2020-2021 ուստարվա պետական քննությունների արդյունքների ամփոփում

2. Քննաշրջանի ամփոփում

3. Գալիք ուստարվա բեռնվածությունը և ամբիոնի աշխատանքների պլանը

4. Այլ

ԼՍԵՑԻՆ՝ Ն. Դալյանը նշեց, որ

ա/ ընդհանուր առմամբ առկա և հեռակա բաժինների բակալավրիատի և մագիսրատուրայի ավարտական քննություններն ընթացել են առանց որևէ խնդիրների, դրանք տեխնիկապես կազմակերպվել են բարձր մակարդակով, չի եղել անբավարար գնահատական, չի եղել որևէ բողոքարկում:

բ/ Դեկանը շնորհակալություն հայտնեց ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի բոլոր գրախոսներին մանրակրկիտ և անաչառ աշխատանքի համար: Ս. Լուլուկյանը, սակայն, իր հիասթափությունը հայտնեց որոշ աշխատանքների կապակցությամբ՝ կոչ անելով գիտական ղեկավարներին ավելի մեծ ուշադրություն դարձնել այդ աշխատանքների ղեկավարմանը, պաշտպանության ներկայացվող աշխատանքների թե բովանդակության, թե ձևավորման և թե պրեզենտացիաների առումով:

Քննարկվեցին գալիք ուստարվա բեռնվածությունը և ամբիոնի աշխատանքների պլանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ բ.գ.դ., պրոֆեսոր Ն. Դալյանը, դոցենտներ Լ.Մելիքյանը, Է. Բայաթյանը, Կ.Միրզոյանը, ասիստենտ Ա. Բաղրամյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ընդհանուր առմամբ դրական գնահատել պետական քննությունների արդյունքները:

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝ Ն. Դալյան

ՆԻՍՏԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. Զոհրաբյան